| ՀԱՍՏԱՏՎԱԾ Է | УТВЕРЖДЕНО | APPROVED | ԳՐԱՆՑՎԱԾ Է | ЗАРЕГИСТРИРОВАНО | REGISTERED |
|---|---|---|---|---|---|
| «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից Տիգրան Դավթյանի 2024թ. հուլիսի 1-ի Թիվ 1 որոշմամբ | Решением единственного участника общества с ограниченной ответственность «АКТИНА КАПИТАЛ» Тиграна Давтяна № 1 от 1 июля 2024 года | By the decision No. 1 of the sole participant of the limited liability company AKTINA CAPITAL, Tigran Davtyan, dated July 1, 2024 | ՀՀ կենտրոնական բանկում | В Центральном банке РА | At the RA Central bank on |

| ՓՈՓՈԽՎԱԾ Է | ИЗМЕНЕНО | AMENDED | ԳՐԱՆՑՎԱԾ Է | ЗАРЕГИСТРИРОВАНО | REGISTERED |
|---|---|---|---|---|---|
| «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից Տիգրան Դավթյանի 2025թ. մարտի 19-ի Թիվ 1-2025-03 որոշմամբ | Решением единственного участника общества с ограниченной ответственностью «АКТИНА КАПИТАЛ» Тиграна Давтяна № 1-2025-03 от 19 | By the decision No. 1-2025-03 of the sole participant of the limited liability company AKTINA CAPITAL, Tigran Davtyan, dated March | ՀՀ կենտրոնական բանկում | В Центральном банке РА | At the RA Central bank on |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | марта 2025 года | 19, 2025 | | | |
| **ՓՈՓՈԽՎԱԾ Է** | **ИЗМЕНЕНО** | **AMENDED** | **ԳՐԱՆՑՎԱԾ Է** | **ЗАРЕГИСТРИРОВАНО** | **REGISTERED** |
| «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից Տիգրան Դավթյանի 2025թ. դեկտեմբերի 11-ի Թիվ 2025-12-15-1 որոշմամբ | Решением единственного участника общества с ограниченной ответственностью «АКТИНА КАПИТАЛ» Тиграна Давтяна № 2025-12-15-1 от 11 декабря 2025 года | By the decision No. 2025-12-15-1 of the sole participant of the limited liability company AKTINA CAPITAL, Tigran Davtyan, dated December 11, 2025 | ՀՀ կենտրոնական բանկում | В Центральном банке РА | At the RA Central bank on |
| **ՓՈՓՈԽՎԱԾ Է** | **ИЗМЕНЕНО** | **AMENDED** | **ԳՐԱՆՑՎԱԾ Է** | **ЗАРЕГИСТРИРОВАНО** | **REGISTERED** |
| ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի | Протоколом собрания участников общества с ограниченной ответственностью | By the protocol N 2026/07/13-1 of the general meeting of participants of the limited | ՀՀ կենտրոնական բանկում | В Центральном банке РА | At the RA Central bank on |

| | | |
|---|---|---|
| 2026թ. հուլիսի 13-ի Թիվ 2026/07/13-1 արձանագրությամբ | «АКТИНА КАПИТАЛ» 2026/07/13-1 от 13 июля 2026 года | liability company AKTINA CAPITAL, dated July 13, 2026 |

| | |
|---|---|
| Տնօրեն / Директор / Director<br>Սերգեյ Գալոյան / Сергей Галоян / Sergey Galoyan | ՀՀ կենտրոնական բանկի նախագահ / Председатель Центрального банка РА / Governor of the RA Central bank |
| Sergey Galoyan Digitally signed by Sergey Galoyan Date: 2026.07.24 15:12:23 +04'00' | Digitally signed by Martin Galstyan<br>Date: 2026.07.29 13:51:40 AMT<br>Reason: Գրանցված է 27.07.2026թ. |
| (անուն, ազգանուն, ստորագրություն/имя, фамилия, подпись/name, surname, signature) | (անուն, ազգանուն, ստորագրություն/имя, фамилия, подпись/name, surname, signature) |

| | | |
|---|---|---|
| **«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն** | **Общество с ограниченной ответственностью «АКТИНА КАПИТАЛ»** | **“AKTINA CAPITAL” limited liability company** |
| **ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ** | **УСТАВ** | **CHARTER** |
| **(նոր խմբագրություն)** | **(новая редакция)** | **(new edition)** |

| | | | |
|---|---|---|---|
| **1.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ** | **ОБЩИЕ ПОЛОЖЕНИЯ** | **GENERAL PROVISIONS** |
| 1.1. | «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ ընկերություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին և գործող այլ իրավական ակտերին համապատասխան: | Общество с ограниченной ответственностью «АКТИНА КАПИТАЛ» (в дальнейшем: общество) было создано в соответствии с Гражданским кодексом Республики Армения, законом РА «Об обществах с ограниченной ответственностью», законом РА «О рынке ценных бумаг» и другими действующими правовыми актами. | The limited liability company AKTINA CAPITAL (hereinafter: company) was established in accordance with the Civil Code of the Republic of Armenia, the RA law “On Limited Liability Companies”, the RA law “On the Securities Market”, and other applicable legal acts. |
| 1.2. | Ընկերությունը շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:<br><br>Ընկերությունը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից: | Общество является коммерческой организацией, целью которой является получение прибыли, которая имеет обособленное имущество в собственности и несет ответственность за свои обязательства этим имуществом, может от своего имени приобретать и осуществлять имущественные и личные неимущественные права, нести обязанности, выступать в суде в качестве истца или ответчика.<br><br>Общество считается созданной и приобретает статус юридического лица с момента регистрации в Центральном банке РА. | The company is a commercial organization with the purpose of profit obtention, which has separate property as its own and is liable for its obligations with that property; which may, in its own name, acquire and exercise proprietary and personal non-proprietary rights, assume obligations, and act as a plaintiff or defendant in court.<br><br>The company is considered established and acquires the status of a legal entity from the date of its registration with the RA Central Bank. |
| 1.3. | Ընկերության մասնակիցների ավանդները, դրանց հաշվին ստեղծված, ինչպես նաև ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքն ընկերությանն են պատկանում սեփականության իրավունքով և ընկերությունն ազատ է իր հայեցողությամբ տիրապետել, | Вклады участников общества, имущество, созданное за их счет, а также имущество, произведенное и приобретенное в ходе деятельности общества, принадлежат обществу на праве собственности и общество | The contributions of the company's participants, the property created from them, as well as the property produced and acquired during the company's operations, belong to the company as its ownership and the company is free to |

| | | | |
|---|---|---|---|
| | օգտագործել և տնօրինել դրանք: | свободно владеет, пользуется и распоряжается ими по своему усмотрению. | possess, use, and dispose of them at its discretion. |
| 1.4. | Ընկերության մասնակիցների ավանդների արժեքից կազմվում է կանոնադրական կապիտալ, որը սահմանում է ընկերության պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: | Стоимость вкладов участников общества формирует уставный капитал, который определяет минимальный размер имущества общества, гарантирующий интересы ее кредиторов. | The value of the contributions made by the company’s participants forms the charter capital, which determines the minimum amount of the company’s assets that guarantee the interests of the company’s creditors. |
| 1.5. | Ընկերությունն ունի իր մասնակիցների գույքից առանձնացված գույք: Ընկերության գույքը և պարտավորությունները հաշվի են առնվում ինքնուրույն հաշվեկշռում:<br><br>Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:<br><br>Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: | Общество имеет имущество, обособленное от имущества ее участников. Имущество и обязательства общества учитываются на самостоятельном балансе.<br><br>Общество не несет ответственности по обязательствам своих участников.<br><br>Участники общества не несут ответственности по обязательствам общества и несут риск убытков, связанных с деятельностью общества, только в пределах стоимости своих внесенных вкладов. | The company has assets separate from those of its participants. The company’s assets and liabilities are accounted for in an independent balance sheet.<br><br>The company is not responsible for the obligations of its participants.<br><br>The company’s participants are not liable for the company’s obligations and bear the risk of losses related to the company’s activities only within the value of their contributed deposits. |
| 1.6. | Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքները պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորությունների համար, իսկ ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության կամ համայնքների պարտավորությունների համար: | Республика Армения или общины не несут ответственности по обязательствам общества, а общество не несет ответственности по обязательствам Республики Армения или общин. | The Republic of Armenia or the communities are not liable for the obligations of the company, and the company is not liable for the obligations of the Republic of Armenia or the communities. |
| 1.7. | Ընկերությունն իրավունք ունի սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում: | Общество имеет право открывать банковские счета в Республике Армения и зарубежом в установленном порядке. | The company has the right to open bank accounts in the Republic of Armenia and foreign countries in accordance with the established procedure. |

| | | | |
|---|---|---|---|
| 1.8. | Ընկերությունն ունի իր անվանմամբ կլոր կնիք հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ: | Общество имеет круглую печать с указанием своего названия на армянском, русском и английском языках, а также зарегистрированный символ, товарные, торговые и другие знаки в соответствии с законом. | The company has a round seal with its name inscribed in Armenian, Russian, and English, as well as a registered symbol, trademark, trade, and other marks in accordance with the law. |
| 1.9. | Ընկերությունը կարող է լինել մեկ այլ ընկերության կամ ընկերակցության մասնակից (հիմնադիր), ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ Հայաստանի Հանրապետությունում և այլ պետությունների տարածքում, գրանցման վայրում գործող օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: | Общество может быть участником (учредителем) другого общества или ассоциации, создавать филиалы и представительства на территории Республики Армения и других странах в соответствии с законодательством, действующим в месте регистрации, если иное не предусмотрено международными договорами Республики Армения. | The company may be a participant (founder) of another company or association, establish branches and representative offices in the Republic of Armenia and in other countries, in accordance with the legislation in force at the place of registration, unless otherwise provided by international treaties of the Republic of Armenia. |
| 1.10. | Ընկերության ֆիրմային անվանումն է. | Фирменное наименование общества: | The company's trade name is: |
| | • հայերեն լրիվ՝ «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն<br>• հայերեն կրճատ՝ «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ<br>• ռուսերեն լրիվ՝ "АКТИНА КАПИТАЛ" общество с ограниченной ответственностью<br>• ռուսերեն կրճատ՝ ООО "АКТИНА КАПИТАЛ "<br>• անգլերեն լրիվ՝ “AKTINA CAPITAL” Limited liability Company<br>• անգլերեն կրճատ՝ “AKTINA CAPITAL” LLC | • Полное наименование на армянском: «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն<br>• Сокращенное наименование на армянском: «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ<br>• Полное наименование на русском: общество с ограниченной ответственностью «АКТИНА КАПИТАЛ»<br>• Сокращенное наименование на русском: ООО «АКТИНА КАПИТАЛ»<br>• Полное наименование на | • Full name in Armenian: «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն<br>• Abbreviated name in Armenian: «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ<br>• Full name in Russian: общество с ограниченной ответственностью «АКТИНА КАПИТАЛ»<br>• Abbreviated name in Russian: ООО «АКТИНА КАПИТАЛ» |

| | | | |
|---|---|---|---|
| | | английском: AKTINA CAPITAL Limited Liability Company<br>• Сокращенное наименование на английском: AKTINA CAPITAL LLC | • Full name in English: AKTINA CAPITAL Limited Liability Company<br>• Abbreviated name in English: AKTINA CAPITAL LLC |
| 1.11. | Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է ՀՀ, Երևան, Կենտրոն, Պապ թագավորի փողոց 27 շենք, 7 տարածք: | Местонахождение общества и почтовый адрес: РА, Ереван, Кентрон, улица Пап тагавор, здание 27, площадь 7. | The company’s location and postal address are: RA, Yerevan, Kentron, Pap tagavor street, building 27, area 7. |
| 1.12. | Ընկերության գործունեության տևողությունը չի սահմանափակվում: | Продолжительность деятельности общества не ограничена. | The duration of the company's activity is not limited. |
| **2.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ** | **ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА** | **THE COMPANY’S ACTIVITY** |
| 2.1. | Ընկերության գործունեության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս ներդրումային ծառայություններ մատուցելու ճանապարհով շահույթի ստացումը: | Целью деятельности общества является получение прибыли путем предоставления инвестиционных услуг в пределах Республики Армения и за ее пределами. | The purpose of the company’s activity is to generate profit through providing investment services within the Republic of Armenia and outside its borders. |
| 2.2. | Ընկերությունն իրավունք ունի մատուցել ներդրումային ծառայություններ ՀՀ կենտրոնական բանկից ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու օրվանից: | Общество имеет право предоставлять инвестиционные услуги с момента получения лицензии на предоставление инвестиционных услуг от Центрального банка РА. | The company has the right to provide investment services starting from the date of obtaining the investment services provision license from the RA Central Bank. |
| **3.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ** | **УСТАВНОЙ КАПИТАЛ ОБЩЕСТВА** | **THE STATUTORY CAPITAL OF THE COMPANY** |
| 3.1. | Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 194,000,000 (հարյուր իննսունչորս միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 1940 (հազար ինը հարյուր քառասուն) հատ բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ: Ընկերության 1940 (հազար ինը հարյուր քառասուն) հատ | Уставный капитал общества составляет 194,000,000 (сто девяносто четыре миллионов) драм РА, который разделен на 1940 (тысяча девятьсот сорок) долей, номинальная стоимость одной доли составляет 100,000 (сто тысяч) драм РА. Все 1940 (тысяча девятьсот сорок) долей Общества распределены, полностью | The company’s statutory capital is AMD 194,000,000 (one hundred ninety-four million), which is divided into 1940 (one thousand nine hundred fourty) shares, with a nominal value of AMD 100,000 (one hundred thousand) per share. All 1940 (one thousand nine hundred fourty) shares of the Company are allocated, fully |

| | | | |
|---|---|---|---|
| | բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և 100 (հարյուր) տոկոսը պատկանում է սույն կանոնադրության հավելվածում նշված մասնակիցներին: | оплачены и на 100 (сто) процентов принадлежат участникам, указанным в приложении к настоящему уставу. | paid, and 100% (one hundred) owned by the participants specified in the annex to this charter. |
| 3.2. | Ընկերության մասնակիցները (հիմնադիրները) պարտավոր են ամբողջությամբ ներդնել իրենց ավանդները կանոնադրական կապիտալում ընկերության պետական գրանցման պահից մեկ տարվա ընթացքում, ընդ որում, ընկերության պետական գրանցման պահին պետք է վճարված լինի ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն կեսը: | Участники (учредители) общества обязаны полностью внести свои вклады в уставный капитал в течение одного года с момента государственной регистрации общества, при этом на момент государственной регистрации общества должна быть выплачена не менее половины уставного капитала общества. | The participants (founders) of the company are obliged to fully contribute their deposits to the statutory capital within one year from the moment of the company’s state registration. Moreover, at least half of the company’s statutory capital must be paid at the time of state registration. |
| 3.3. | Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակիցների կամ ընկերության մեջ ընդգրկվող երրորդ անձանց կողմից ոչ դրամային ավանդներ ներդնելու դեպքում դրանց դրամական գնահատականը կատարվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածով սահմանված կարգով:<br>Ոչ դրամային ավանդների դրամական գնահատականը հաստատվում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից միաձայն կարգով:<br>Ընկերության կանոնադրական կապիտալի չափը չի կարող պակաս լինել գործող օրենսդրությամբ սահմանված նվազագույն արժեքից: | В случае внесения неденежных вкладов в уставный капитал общества участниками или третьими лицами, входящими в состав общества, их денежная оценка производится в порядке, определенной статьей 29 закона РА “Об обществах с ограниченной ответственностью”. Денежная оценка неденежных вкладов утверждается общим собранием участников общества единогласно. Размер уставного капитала общества не может быть меньше минимального значения, установленного действующим законодательством. | If non-monetary contributions are made to the company's statutory capital by participants or third parties joining the company, their monetary valuation shall be carried out in accordance with Article 29 of the RA law "On Limited Liability Companies".<br>The monetary valuation of non-monetary contributions must be unanimously approved by the general meeting of the company's participants.<br>The amount of the company's statutory capital may not be less than the minimum value established by the applicable legislation. |
| 3.4. | Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն այն ամբողջությամբ վճարելուց հետո: Ընկերության | Увеличение уставного капитала общества возможно только после его полной оплаты. | The increase of the company's statutory capital is possible only after its full payment. |

կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է իրականացվել ընկերության գույքի հաշվին, մասնակիցների լրացուցիչ ներդրումների հաշվին կամ ընկերության մեջ ընդունվող երրորդ անձանց ավանդների հաշվին:

Ընկերության գույքի հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում համապատասխանորեն մեծանում է նաև մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը՝ անփոփոխ թողնելով դրանց չափը:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը նրա մասնակիցների լրացուցիչ ավանդների և ընկերություն ընդունվող երրորդ անձանց ավանդների հաշվին իրականացվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածով սահմանված կարգով: Ընկերության մասնակցի դիմումի հիման վրա այդ մասնակցի կողմից լրացուցիչ ավանդ ներդնելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշում ընդունվում է ընկերության մասնակիցների կողմից՝ միաձայն:

Увеличение уставного капитала общества может осуществляться за счет имущества общества, дополнительных взносов участников или вкладов третьих лиц, принимаемых в состав общества.

В случае увеличения уставного капитала за счет имущества общества, пропорционально увеличивается номинальная стоимость долей участников без изменения их размеров.

Увеличение уставного капитала общества за счет дополнительных вкладов ее участников и вкладов третьих лиц, принимаемых в общество, осуществляется в порядке, определенном статьей 33 закона РА «Об обществах с ограниченной ответственностью».

На основании заявления участника общества решение об увеличении уставного капитала, путем внесения этим участником дополнительного вклада, принимается единогласно всеми участниками общества.

The statutory capital may be increased through the company's assets, additional contributions from participants, or deposits from third parties joining the company.

When the statutory capital is increased through the company's assets, the nominal value of the participants' shares increases accordingly while keeping their proportions unchanged.

The increase of the statutory capital through additional contributions from participants and deposits from third parties joining the company is carried out in accordance with Article 33 of the RA law "On Limited Liability Companies".

Based on a participant’s request, a decision to increase the statutory capital through an additional contribution by that participant shall be adopted unanimously by the company's participants.

3.5. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը իրականացվում է ընկերության մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցման և (կամ) ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարման ճանապարհով:

Ընկերության մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը նվազեցնելու ճանապարհով

Уменьшение уставного капитала общества осуществляется путем уменьшения номинальной стоимости долей участников общества и/или путем погашения долей, принадлежащих обществу.

В случае уменьшения уставного капитала общества путем уменьшения номинальной стоимости долей

The reduction of the company's statutory capital is carried out by decreasing the nominal value of the participants' shares and/or by redeeming the shares owned by the company.

In case of reducing the statutory capital by decreasing the nominal value of the participants' shares, the proportions of

| | | | |
|---|---|---|---|
| | ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքում մասնակիցների բաժնեմասերի չափերը չեն փոխվում:<br><br>Կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո ընկերությունը պարտավոր է 30 օրվա ընթացքում այդ մասին և կանոնադրական կապիտալի նոր չափի մասին գրավոր տեղեկացնել իրեն հայտնի ընկերության բոլոր պարտատերերին: Ընկերության պարտատերերն իրավունք ունեն գրավոր տեղեկացումն ստանալու պահից 30 օրվա ընթացքում, պահանջել իրենց նկատմամբ ընկերության պարտավորությունների վաղաժամկետ դադարում կամ կատարում, ինչպես նաև իրենց վնասների հատուցում: | участников общества, размеры долей участников остаются неизмененными.<br><br>После принятия решения об уменьшении уставного капитала общество обязано в течение 30 дней письменно уведомить об этом и о новом размере уставного капитала всех известных ему кредиторов Общества.<br><br>Кредиторы общества вправе в течение 30 дней с момента получения письменного уведомления потребовать досрочного прекращения обязательств общества перед ними или их исполнения, а также возмещения причиненного им вреда. | their shares remain unchanged.<br><br>After making a decision to reduce the statutory capital, the company is obliged to notify all known creditors in writing within 30 days about the reduction and the new amount of statutory capital. The company's creditors have the right, within 30 days from the receipt of the written notice, to demand the early termination or fulfillment of the company's obligations toward them, as well as compensation for their losses. |
| 3.6. | Ընկերության պետական գրանցումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կանոնադրական կապիտալն ամբողջությամբ չվճարելու դեպքում ընկերությունը պարտավոր է նվազեցնել կանոնադրական կապիտալը մինչև փաստացի վճարված չափը, կամ որոշում ընդունել ընկերության լուծարման մասին: | В случае неуплаты уставного капитала в полном объеме в течение одного года с момента государственной регистрации общества, общество обязано уменьшить уставный капитал до фактически выплаченной суммы или принять решение о ликвидации. | If the statutory capital is not fully paid within one year after the company's state registration, the company is obliged to reduce the statutory capital to the amount actually paid or make a decision on the liquidation of the company. |
| 3.7. | Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը: | Если по окончании второго или каждого последующего финансового года стоимость чистых активов общества становится ниже уставного капитала, общество обязано уменьшить свой уставный капитал. | If, at the end of the second or any subsequent financial year, the company's net assets value is less than its statutory capital, the company is obliged to reduce its statutory capital. |
| **4.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ** | **ФОНДЫ ОБЩЕСТВА** | **FUND'S OF THE COMPANY** |
| 4.1. | Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ, | Общество имеет резервный фонд, | The company has a reserve fund, which is |

| | | | |
|---|---|---|---|
| | որը ստեղծվում է ընկերության շահույթից մասհանումների հաշվին, կանոնադրական կապիտալի արժեքի 15 տոկոսի չափով: | который формируется за счет отчислений из прибыли общества в размере 15 процентов от уставного капитала. | formed from allocations of the company's profit, amounting to 15% of the statutory capital. |
| 4.2. | Պահուստային հիմնադրամը ձևավորվում է շահույթի առնվազն հինգ տոկոսի չափով կատարվող մասհանումներից: | Резервный фонд формируется за счет отчислений в размере не менее пяти процентов от прибыли. | The reserve fund is formed from allocations of at least five percent of the profit. |
| 4.3. | Պահուստային հիմնադրամն օգտագործվում է ընկերության կորուստները ծածկելու համար, եթե ընկերության շահույթն այդ նպատակին չի բավարարում:<br>Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար: | Резервный фонд используется для покрытия убытков общества, если прибыль общества недостаточна для достижения этой цели.<br>Резервный фонд не может быть использован для других целей. | The reserve fund is used to cover the company's losses if the company's profit is insufficient for that purpose.<br>The reserve fund cannot be used for other purposes. |
| **5.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՓՈԽԱՆՑԵԼԸ** | **ПЕРЕДАЧА ДОЛЕЙ В УСТАВНОМ КАПИТАЛЕ ОБЩЕСТВА** | **TRANSFERING THE SHARE IN THE COMPANY'S STATUTORY CAPITAL** |
| 5.1. | Ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, իսկ բոլոր մասնակիցների համաձայնության դեպքում՝ վաճառել կամ այլ ձևով օտարել երրորդ անձանց: | Участник общества имеет право продать свою долю (её часть) в уставном капитале общества одному или нескольким участникам данного общества, а в случае согласия всех участников – продать или иным образом передать её третьим лицам. | The participant of the company has the right to sell or otherwise transfer their share (or its part) in the company’s statutory capital to one or more of the company's participants, and with the consent of all participants, to sell or otherwise transfer it to third parties. |
| 5.2. | Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից այն գնով, որն առաջարկվել է երրորդ անձանց:<br>Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ | Участники общества имеют преимущественное право на покупку доли (её части) пропорционально их долям в уставном капитале, по цене, предложенной третьим лицом.<br>Участник общества, который намерен продать свою долю (её часть) третьему | The participants of the company have the preferential right to purchase the share (its part) of a participant in proportion to their own share, at the price offered to third parties.<br>A participant wishing to sell their share (its part) to a third party must notify the |

| | | | |
|---|---|---|---|
| | անձին, պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել ընկերությանը՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները: Ընկերությունն այդ մասին 5 օրվա ընթացքում գրավոր հայտնում է ընկերության մասնակիցներին: Այն դեպքում, երբ ընկերության մասնակիցները տեղեկացվելու օրվանից 15 օրվա ընթացքում չեն օգտվում բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից, մասնակցի բաժնեմասը կարող է օտարվել երրորդ անձի: | лицу, обязан письменно уведомить об этом обществу, указав цену и другие условия продажи. Общество в течение 5 дней сообщает участникам общества о поступившем уведомлении. Если участники общества не воспользуются своим преимущественным правом на покупку доли (её части) в течение 15 дней с момента уведомления, доля может быть продана третьему лицу. | company in writing, stating the price and other terms of the sale. The company must inform the participants about it in writing within 5 days. If the company's participants do not exercise their preferential right to purchase the share (its part) within 15 days from the date of notification, the participant's share may be transferred to a third party. |
| 5.3. | Բաժնեմասի օտարումը իրականացվում է պարզ գրավոր ձևով ձևակերպված համապատասխան պայմանագրով (ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ վավերացված նոտարական կարգով):<br><br>Բաժնեմասը ձեռք բերողին փոխանցվում են ընկերության մասնակցի մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքներն ու պարտականությունները: | Отчуждение доли в уставном капитале общества осуществляется на основании соответствующего договора, оформленного в простой письменной форме (в случаях, предусмотренных Гражданским кодексом РА — нотариально заверенный).<br><br>При передаче доли приобретающее ее лицо получает все права и обязательства участника общества, возникшие до момента отчуждения доли. | The transfer of the share is carried out through an agreement drawn up in a simple written form (or, in cases stipulated by the RA Civil Code, in a notarized form).<br><br>The rights and obligations arising from the participant's share before its transfer are transferred to the person acquiring the share. |
| 5.4. | Ընկերության մասնակցի մահվան (վերակազմակերպման) ժամանակ կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասն անցնում է մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին):<br><br>Ժառանգների (իրավահաջորդների) ընկերության մասնակից դառնալուց հրաժարվելու դեպքում ընկերությունը պարտավոր է նրանց վճարել համապատասխան բաժնեմասը սույն կանոնադրության 9-րդ կետի 2 ենթակետով | В случае смерти (реорганизации) участника общества его доля в уставном капитале переходит к наследникам (правопреемникам) участника.<br><br>Если наследники (правопреемники) отказываются стать участниками общества, общество обязано выплатить им соответствующую долю в порядке, установленном подпунктом 2 пункта 9 настоящего устава. | In the event of the death (reorganization) of the participant of the company, their share in the statutory capital passes to the participant's heirs (successors).<br><br>If the heirs (successors) refuse to become participants in the company, the company is obliged to pay them the corresponding share in accordance with the procedure specified in subclause 2 of clause 9 of this charter. |

| | | | |
|---|---|---|---|
| | սահմանված կարգով: | | |
| **6.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼԸ ԿԱՄ ԲՌՆԱԳՐԱՎԵԼԸ** | **ВЗЫСКАНИЕ ИЛИ КОНФИСКАЦИЯ ДОЛИ УЧАСТНИКА В ИМУЩЕСТВЕ ОБЩЕСТВА** | **FORECLOSURE OR CONFISCATION OF THE PARTICIPANT’S SHARE IN THE COMPANY’S ASSETS** |
| 6.1. | Ընկերության մասնակցի պարտքերի համար պարտատերերի պահանջով նրա բաժնեմասի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար այլ գույքի անբավարարության դեպքում՝ դատարանի վճռի հիման վրա: | По требованию кредиторов на долю участника общества может быть обращено взыскание только в случае недостаточности другого имущества этого участника для погашения долгов, на основании решения суда. | A participant’s share in the company may be subject to foreclosure based on the creditors’ claim for the participant’s debts only in case of insufficiency of other assets to cover the participant’s debts, on the bases of a court ruling. |
| 6.2. | Ընկերության մասնակցի բաժնեմասը կարող է բռնագրավվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: | Доля участника общества может быть конфискована только в случаях, предусмотренных законом. | A participant's share in the company may be confiscated only in cases provided by the law. |
| 6.3. | Ընկերության մասնակցի բաժնեմասի բռնագանձումը կամ բռնագրավումը իրականացվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածով սահմանված կարգով: | Взыскание или конфискация доли участника общества осуществляется в соответствии с порядком, установленным статьей 20 закона РА «Об обществах с ограниченной ответственностью». | The foreclosure or confiscation of a participant’s share in the company is carried out in accordance with the procedure specified in Article 20 of the RA law “On Limited Liability Companies”. |
| 6.4. | Ընկերության գույքում մասնակցի ամբողջ մասի վրա բռնագանձում տարածելը կամ բաժնեմասն ամբողջությամբ բռնագրավելը դադարեցնում է նրա մասնակցությունն ընկերությանը: | Взыскание на всю долю участника в имуществе общества или полное изъятие доли прекращает его участие в обществе. | Foreclosure of the entire share of a participant in the company’s assets or complete confiscation of the share terminates their participation in the company. |
| **7.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ** | **УЧАСТНИКИ ОБЩЕСТВА** | **PARTICIPANTS OF THE COMPANY** |
| 7.1. | Ընկերության մասնակիցներ (հիմնադիրներ) կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի | Участниками (учредителями) общества могут быть физические и юридические лица, а также Республика Армения и | The participants (founders) of the company can be individuals and legal entities, as well as the Republic of |

| | | | |
|---|---|---|---|
| | Հանրապետությունը և համայնքները՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: | общины в порядке, установленном действующим законодательством. | Armenia and communities, in accordance with the procedure established by the applicable legislation. |
| | Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ընկերության մասնակից (հիմնադիր) չեն կարող լինել: | Государственные и местные органы управления не могут быть участниками (учредителями) общества. | State and local self-government bodies cannot be participants (founders) of the company. |
| 7.2. | Մեկ մասնակից ունենալու (մնալու) դեպքում ընկերության միակ մասնակիցն իրականացնում է գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ ընկերության մասնակիցներին վերապահված իրավունքները և պարտականությունները: | В случае наличия одного участника (если остается один участник) единственный участник общества осуществляет права и обязанности, предусмотренные действующим законодательством и настоящим уставом для участников общества. | In the case of having (remaining) a single participant, the sole participant exercises the rights and obligations reserved for the company's participants under the applicable legislation and this charter. |
| 7.3. | Ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: | Количество участников общества не должно быть выше 49. | The number of participants in the company must not exceed 49. |
| **8.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | **ПРАВА И ОБЯЗАННОСТИ УЧАСТНИКОВ ОБЩЕСТВА** | **RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTICIPANTS OF THE COMPANY** |
| 8.1. | Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն.<br>• մասնակցել ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով;<br>• մասնակցել ընկերության կառավարմանը;<br>• տեղեկատվություն ստանալ ընկերության գործունեության մասին, ծանոթանալ նրա հաշվապահական գրքերին և այլ փաստաթղթերին;<br>• ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը;<br>• ընկերության մասնակիցների ընդհանուր | Участники общества имеют право:<br>• участвовать в общем собрании участников общества с правом голоса по всем вопросам, относящимся к его компетенции,<br>• принимать участие в управлении обществом,<br>• получать информацию о деятельности общества,<br>• знакомиться с его бухгалтерскими книгами и другими документами,<br>• получать часть прибыли, установленную законом, от деятельности общества, | The participants of the company have the right to:<br>• Participate in the general meeting of the company's participants, with the right to vote on all matters within its authority;<br>• Participate in the management of the company;<br>• Receive information about the company's activities, review its accounting books and other documents;<br>• Receive the portion of the profit from the company's activities, as stipulated by law; |

ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի;

- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց;
- անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից;
- հայցով դիմել դատարան, ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված, գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով;
- ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը;
- օրենքով սահմանված կարգով գրավ դնել ընկերության գույքում իր բաժնեմասի իրավունքը:

- уполномочить третье лицо для представления своих интересов на общем собрании участников общества,
- отчуждать свою долю (или её часть) одному или нескольким участникам общества, а также третьим лицам, в порядке, установленном настоящим уставом,
- выйти из общества в любое время, независимо от согласия других участников,
- обратиться в суд с иском об обжаловании решений, принятых общим собранием общества, если эти решения противоречат действующим законам и иным правовым актам,
- в случае ликвидации общества получить свою долю оставшегося имущества после осуществления расчетов с кредиторами, либо эквивалент этой доли в денежной форме,
- в установленном законом порядке заложить свою долю в имуществе общества.

- Authorize a third party to represent their rights in the general meeting of the company’s participants;
- Transfer their share (its part) to one or more participants of the company or third parties, in accordance with the procedure established by this charter;
- Exit the company at any time, regardless of the consent of the other participants;

  File a lawsuit with the court to appeal decisions made by the general meeting of the company’s participants that contradict the applicable laws and other legal acts;
- In case of the company’s dissolution, receive their share of the remaining property or its value after the settlement with creditors;
- Pledge their share in the company’s assets in accordance with the procedure established by the law.

8.2. Ընկերության մասնակիցները պարտավոր են.

- ավանդներ ներդնել սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով, չափերով և ժամկետներում;
- չհրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ, բացի օրենքով սահմանված դեպքերից;

Участники общества обязаны:

- вносить вклады в порядке, размерах и в сроки, предусмотренные настоящим уставом,
- не разглашать информацию, содержащую коммерческую тайну о деятельности общества, за исключением случаев,

The participants of the company are obliged to:

- Make contributions in accordance with the procedure, amounts, and deadlines stipulated by this charter;
- Not disclose confidential information about the company’s activities, except in cases provided

- իր գործողություններով չխոչընդոտել ընկերության գործունեության նորմալ գործընթացին;
- ժամանակին կատարել ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները;
- ընկերության գույքում իր բաժնեմասի իրավունքը գրավ դնելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել ընկերությանը;
- ենթարկվել օրենքների, այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության պահանջներին:

предусмотренных законом,

- своими действиями не препятствовать нормальному функционированию общества,
- своевременно исполнять взятые на себя обязательства перед обществом,
- немедленно уведомить общество в случае заложения права на свою долю в имуществе общества,
- подчиняться требованиям законов, иных правовых актов и настоящего устава.

by the law;

- Not obstruct the normal operation of the company through their actions;
- Timely fulfill the obligations undertaken towards the company;
- Immediately notify the company if they pledge their share in the company's assets;
- Comply with the requirements of the laws, other legal acts, and this Charter.

## 9. ՄԱՍՆԱԿՑԻ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

## ВЫХОД УЧАСТНИКА ИЗ ОБЩЕСТВА

## THE PARTICIPANT'S EXIT FROM THE COMPANY

9.1. Ընկերության մասնակիցը, անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից:

Участник общества, независимо от согласия других участников, имеет право выйти из общества в любое время.

The participant of the company has the right to exit the company at any time, regardless of the consent of the other participants.

9.2. Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը փոխանցվում է ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է այդ պահից՝ վեց ամսվա ընթացքում, մասնակցին վճարել բաժնեմասի նրա վճարած մասի արժեքը: Դուրս եկող մասնակցի և ընկերության համաձայնությամբ դուրս եկող մասնակցին կարող է տրվել նրա բաժնեմասի լրիվ վճարված մասի արժեքին համապատասխանող գույք:

Դուրս եկող մասնակցին հասանելիք ընկերության գույքի մասը կամ դրա արժեքը որոշվում է դուրս

С момента подачи заявления участника о выходе из общества его доля передается обществу. Общество обязано в течение шести месяцев с этого момента выплатить участнику стоимость части его доли, уплаченной им. По соглашению между выходящим участником и обществом, выходящему участнику может быть передано имущество, стоимость которого соответствует полностью оплаченной доле.

Часть имущества общества, которую выходящий участник имеет право

Upon submitting an application for exit from the company, the participant's share is transferred to the company. The company is obligated to pay the participant the value of the paid portion of their share within six months from that moment. By mutual agreement between the exiting participant and the company, the exiting participant may be given property corresponding to the value of the fully paid portion of their share.

The portion of the company's assets or its value to which the exiting participant is entitled is determined based on the

| | | | |
|---|---|---|---|
| | գալու դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա: | получить, или ее стоимость определяется на основе бухгалтерской отчетности общества за последний отчетный период на момент подачи заявления о выходе. | company’s latest financial statements at the time of submitting the exit application. |
| 9.3. | Եթե ընկերության կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներ է դրվել գույքի օգտագործման իրավունք, ապա համապատասխան գույքը վերադարձվում է ընկերությունից դուրս եկող մասնակցին: Նման գույքի բնականոն մաշվածության հետևանքով նվազած արժեքը չի հատուցվում: | Если в уставном капитале общества в качестве вклада используется право на использование имущества, то соответствующее имущество возвращается выходящему участнику. Износ такого имущества из-за естественного износа не компенсируется. | If the contribution to the company's charter capital was made in the form of a right to use property, the corresponding property is returned to the exiting participant. The decrease in value due to normal wear and tear of such property is not compensated. |
| **10.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼԸ** | **ИСКЛЮЧЕНИЕ УЧАСТНИКА ИЗ ОБЩЕСТВА** | **THE PARTICIPANT'S EXPULSION FROM THE COMPANY** |
| 10.1. | Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10% բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը: | Участник общества (участники), который (которые) обладают хотя бы 10% долей общества, имеют право в судебном порядке потребовать исключение другого участника из общества, если его действия или бездействие затрудняют или делают невозможной нормальную деятельность общества. | A participant (or participants) who holds at least 10% of the company’s share capital has (have) the right to demand the expulsion of another participant from the company through legal proceedings, if the actions or inactions of that participant impede or make it impossible for the company to operate normally. |
| 10.2. | Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է ընկերությանը: Ընկերությունը հեռացված մասնակցին վճարում է նրա բաժնեմասի արժեքը, որը որոշվում է սույն կանոնադրության 9-րդ կետի 2 ենթակետով սահմանված կարգով: | Доля исключенного участника переходит в общество. Общество обязано выплатить исключенному участнику стоимость его доли, которая определяется в соответствии с порядком, установленным подпунктом 2 пункта 9 настоящего устава. | The share of the expelled participant is transferred to the company. The company pays the expelled participant the value of their share, which is determined according to the procedure specified in subparagraph 2 of paragraph 9 of this charter. |

## 11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ

## ДОЛИ, ПРИНАДЛЕЖАЩИЕ ОБЩЕСТВУ

## THE SHARES OWNED BY THE COMPANY

11.1. Ընկերությանը պատկանող բաժնեմասերը հաշվի չեն առնվում մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից որոշումների ընդունման ժամանակ քվեարկության արդյունքները որոշելիս, ինչպես նաև ընկերության լուծարման դեպքում գույքը բաշխելիս:

Доли, принадлежащие обществу, не учитываются при определении результатов голосования на общем собрании участников общества, а также при распределении имущества общества в случае его ликвидации.

The shares owned by the company are not taken into account when determining the voting results at the general meeting of participants, as well as when distributing the property upon the company’s liquidation.

11.2. Ընկերության մասնակցին պատկանող բաժնեմասն ընկերությանն անցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում մասնակիցների ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ պետք է բաշխվի ընկերության բոլոր մասնակիցների միջև՝ նրանց բաժնեմասերին համապատասխան, կամ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, կամ երրորդ անձանց, և ամբողջությամբ վճարվի:

Բաժնեմասի չբաշխված մասը պետք է մարվի ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման միջոցով:

После того как доля, принадлежащая участнику общества, перейдет обществу, в течение одного года по единогласному решению общего собрания участников она должна быть распределена между всеми участниками общества пропорционально их долям, или между одним или несколькими участниками общества, или третьими лицами, с полным расчетом.

Не распределенная доля должна быть погашена путем уменьшения уставного капитала общества.

After the share owned by the participant is transferred to the company, the general meeting of participants must unanimously decide to distribute it among all participants of the company within one year in proportion to their shares, or to one or more participants of the company, or to third parties, and it must be fully paid.

The undistributed portion of the share must be redeemed through the reduction of the company's charter capital.

## 12. ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ

## РАСПРЕДЕЛЕНИЕ ПРИБЫЛИ МЕЖДУ УЧАСТНИКАМИ ОБЩЕСТВА

## PROFIT DISTRIBUTION AMONG THE COMPANY’S PARTICIPANTS

12.1. Ընկերությունը տարեկան մեկ անգամ մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ իրականացնում է իր շահույթի բաշխումն ընկերության մասնակիցների միջև:

Բաշխման ենթակա շահույթը բաշխվում է ընկերության մասնակիցների միջև ըստ ընկերության կանոնադրական կապիտալում

Общество один раз в год на основании решения общего собрания участников распределяет свою прибыль между участниками общества. Прибыль, подлежащая распределению, делится между участниками общества пропорционально размеру их долей в

The company distributes its profit among the participants once a year by the decision of the general meeting of participants.

The distributable profit is allocated among the participants in proportion to the size of their shares in the company's

| | | | |
|---|---|---|---|
| | նրանց բաժնեմասերի չափերի: | уставном капитале общества. | charter capital. |
| 12.2. | Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել շահույթի բաշխման մասին կամ ընկերության մասնակիցներին վճարել շահույթ, որի բաշխման մասին որոշումն արդեն ընդունված է՝ | Общество не имеет права принимать решение о распределении прибыли или выплачивать прибыль участникам общества, если уже принято решение о ее распределении: | The company has no right to make a decision on profit distribution or pay profit to the participants if a decision on its distribution has already been made: |
| | • մինչև ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը;<br>• եթե որոշման ընդունման պահին ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է նրա կանոնադրական կապիտալից կամ այդ չափից փոքր կդառնա նման որոշման ընդունման արդյունքում;<br>• ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում: | • до полного внесения уставного капитала общества;<br>• если на момент принятия решения стоимость чистых активов общества меньше его уставного капитала или станет меньше этого размера в результате принятия такого решения;<br>• в иных случаях, предусмотренных законодательством РА. | • before the full payment of the company’s charter capital;<br>• if, at the time of the decision, the value of the company’s net assets is less than its charter capital or will become smaller as a result of such decision;<br>• in other cases, provided by the Armenian legislation. |
| **13.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ** | **УПРАВЛЕНИЕ ОБЩЕСТВОМ** | **MANAGEMENT OF THE COMPANY** |
| 13.1. | Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը (իրավասու կառավարման մարմին) նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է (հետագա տեքստում՝ ընդհանուր ժողով), որն ունի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:<br>Ընկերությունը մեկ անձի կողմից հիմնադրվելու (մեկ մասնակից մնալու) դեպքում ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է ընկերության միակ մասնակիցը: | Высшим органом управления общества (уполномоченным органом управления) является общее собрание его участников (в дальнейшем — общее собрание), которое имеет право принимать окончательные решения по любым вопросам управления и деятельности общества.<br>Если общество основано одним лицом (остается один участник), права общего собрания осуществляет единственный участник общества. | The highest governing body of the company (competent governing body) is the general meeting of its participants (hereinafter referred to as the general meeting), which has the final authority to resolve any management and operational issues.<br>In the case of the company being founded by one person (remaining with one participant), the powers of the general meeting are exercised by the sole participant of the company. |
| 13.2. | Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝<br>• ընկերության գործունեության հիմնական | К исключительной компетенции общего собрания участников общества относятся: | • The exclusive powers of the company's general meeting include:<br>• Deciding on the main directions of the |

ուղղությունների որոշումը;
- ընկերության պլանների և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունների հաստատումը;
- ընկերության կանոնադրության, դրա լրացումների և փոփոխությունների, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը;
- ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը;
- ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (կառավարիչ) տալու հարցերը;
- ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը;
- ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների հաստատումը, շահույթների ու վնասների բաշխումը;
- այլ ընկերություններին կամ կազմակերպություններին մասնակից (հիմնադիր) լինելու մասին որոշման ընդունումը;
- մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

- определение основных направлений деятельности общества;
- утверждение планов общества и отчетов о их выполнении;
- утверждение устава общества, его дополнений и изменений, а также устава в новой редакции;
- изменение размера уставного капитала общества;
- формирование исполнительных органов общества, досрочное прекращение их полномочий, а также вопросы передачи полномочий исполнительного органа общества коммерческой организации или индивидуальному предпринимателю (управляющему);
- выбор руководителя и членов подразделения внутреннего аудита общества, а также досрочное прекращение их полномочий;
- утверждение годовых отчетов и бухгалтерских балансов общества, распределение прибылей и убытков;
- принятие решения о становлении участником (учредителем) других обществ или организаций;
- создание филиалов, представительств и учреждений, утверждение их уставов, реорганизация и ликвидация;
- принятие решения о привлечении должностных лиц общества к имущественной ответственности;
- утверждение документов, регулирующих внутреннюю

company's activities;
- Approving the company's plans and reports on their implementation;
- Approving the company's charter, its amendments and changes, and the new edition of the charter;
- Changing the amount of the company's charter capital;
- Forming the company's executive bodies and early termination of their powers, as well as issues related to granting the powers of the company's executive body to a commercial organization or individual entrepreneur (manager);
- The election of the head and members of the company's internal audit division and the early termination of their powers;
- Approval of the company's annual reports and financial statements, distribution of profits and losses;
- Making decisions on participation (foundation) in other companies or organizations;
- Creation, approval of charters, reorganization, and liquidation of branches, representative offices, and institutions;
- Making decisions regarding the property liability of the company's officers;
- Approval of documents regulating the internal activities of the company (including the business plan), which

վերակազմակերպումը, լուծարումը;

- ընկերության պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումը;
- ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (այդ թվում՝ գործարար ծրագրի) հաստատումը, ինչը ժողովի որոշմամբ կարող է վերապահվել գործադիր մարմնին;
- ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը;
- ընկերության կանոնադրական կապիտալի արժեքի 1/4-ը գերազանցող պայմանագրերին հավանություն տալը;
- ընկերության աուդիտի իրականացման որոշման ընդունումը;
- ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշման ընդունումը;
- լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը;
- «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

деятельность общества (в том числе бизнес-плана), которые по решению собрания могут быть переданы исполнительному органу;

- принятие обществом решения о выпуске ценных бумаг;
- одобрение договоров, превышающих 1/4 стоимости уставного капитала общества;
- принятие решения об осуществлении аудита общества,
- принятие решения о реорганизации или ликвидации общества;
- назначение ликвидационной комиссии и принятие ликвидационного баланса;
- решение других вопросов, предусмотренных законом РА
- «Об обществах с ограниченной ответственностью» и настоящим Уставом.

may be delegated to the executive body by the meeting's decision;

- Making decisions on the issuance of securities by the company;
- Approval of contracts exceeding 1/4 of the company's charter capital;
- Making decisions on conducting the company's audit;
- Making decisions on the reorganization or liquidation of the company;
- Appointing a liquidation commission and approving the liquidation balance sheet;
- Resolving other issues provided for by the RA law "On Limited Liability Companies" of the Republic of Armenia and this Charter.

13.3. Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատվում են ընկերության հերթական ընդհանուր ժողովում, որն անցկացվում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 3 ամսվա ընթացքում:

Ежегодные результаты деятельности общества утверждаются на очередном общем собрании общества, которое проводится в течение 3 месяцев после окончания финансового года.

The annual results of the company's activities are approved at the company’s regular general meeting, which is held within 3 months after the end of the financial year.

Հերթական ընդհանուր ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում

Кроме очередного общего собрания, созываемые собрания считаются внеочередными. Внеочередные общие собрания созываются для обсуждения

In addition to the regular general meeting, convened meetings are considered extraordinary. Extraordinary general meetings are convened for the discussion

| | | | |
|---|---|---|---|
| | են անհետաձգելի հարցերի քննարկման համար: | неотложных вопросов. | of urgent matters. |
| | Հերթական և արտահերթ ընդհանուր ժողովները հրավիրվում են ընկերության գործադիր մարմնի կողմից: | Очередные и внеочередные общие собрания созываются исполнительным органом общества. | Both regular and extraordinary general meetings are convened by the executive body of the company. |
| 13.4. | Ընկերության գործադիր մարմինը ընդհանուր ժողովի անցկացման օրվանից 20 օր առաջ այդ մասին պատվիրված նամակներով կամ հաստատված էլեկտրոնային փոստով ծանուցում է բոլոր մասնակիցներին: | Исполнительный орган общества уведомляет всех участников о проведении общего собрания за 20 дней до его проведения, либо заказными письмами, либо подтвержденной электронной почтой. | The executive body of the company notifies all participants about the general meeting 20 days before the date of the meeting, either through ordered letters or confirmed email. |
| | Ծանուցման մեջ պետք է նշված լինեն ընդհանուր ժողովի անցկացման տեղը, ամսաթիվը, ժամը և առաջարկվող օրակարգը: | В уведомлении должны быть указаны место, дата, время проведения общего собрания и предлагаемая повестка дня. | The notice must include the location, date, time, and proposed agenda of the general meeting. |
| | Ընկերության մասնակիցների կողմից օրակարգի վերաբերյալ առաջարկությունների և լրացումների ներկայացումը, գործադիր մարմնի կողմից դրանք օրակարգում ընդգրկելը և այդ մասին մասնակիցներին ծանուցելը ընդհանուր ժողովի օրակարգը նախապատրաստելիս մասնակիցներին անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի տրամադրումն իրականացվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով սահմանված կարգով: | Представление предложений и дополнений к повестке дня участниками общества, включение их в повестку дня исполнительным органом и уведомление участников об этом, а также предоставление участникам необходимой информации и материалов при подготовке повестки дня общего собрания осуществляется в порядке, установленном статьей 39 закона РА «Об обществах с ограниченной ответственностью». | The submission of proposals and additions to the agenda by the company’s participants, the inclusion of those in the agenda by the executive body, and the notification of participants about this, as well as the provision of necessary information and materials to participants while preparing the agenda of the general meeting, are carried out in accordance with Article 39 of the RA law "On Limited Liability Companies". |
| 13.5. | Ընդհանուր ժողովի բացումից առաջ կատարվում է ընկերության ժամանած մասնակիցների գրանցում: | До открытия общего собрания проводится регистрация участников общества, прибывших на собрание. | Before the opening of the general meeting, the participants who have arrived are registered. |
| | Ընկերության մասնակիցը ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված | Участник общества может реализовать свое право участвовать в общем собрании лично или через уполномоченного представителя. | A participant of the company may exercise their right to participate in the general meeting either personally or through an authorized representative. |

| | | | |
|---|---|---|---|
| | ներկայացուցչի միջոցով: | Представитель участника может присутствовать на общем собрании общества только при наличии доверенности, оформленной в соответствии с законом. Участник сохраняет первичное право участия в общем собрании общества, независимо от доверенности, предоставленной им представителю. | The representative of the participant may attend the company's general meeting only if there is a power of attorney that is issued in accordance with the law. The participant retains the primary right to participate in the company's general meeting, regardless of the power of attorney given to the representative. |
| | Մասնակցի ներկայացուցիչը կարող է մասնակցել ընկերության ընդհանուր ժողովին միայն օրենքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագրի առկայության դեպքում: Մասնակիցը պահպանում է ընկերության ընդհանուր ժողովում մասնակցելու առաջնային իրավունքը՝ անկախ իր կողմից ներկայացուցչին տրված լիազորագրից: | | |
| 13.6. | Ընկերության ընդհանուր ժողովն իր նիստը վարելու համար ընկերության մասնակիցների կազմից ընտրում է ժողովի նախագահին: | Общее собрание общества выбирает председателя из состава участников для проведения заседания. | The general meeting of the company elects a chairman from among the members to conduct the meeting. |
| 13.7. | Ընկերության ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելիին տնօրինող մասնակիցները: | Общее собрание общества правомочно, если в нем участвуют участники, которые обладают более половины общего числа голосов всех участников общества. | The general meeting of the company is quorate if participants owning more than half of the total number of votes of all participants are present. |
| | Ընկերության յուրաքանչյուր մասնակից ընդհանուր ժողովում ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր լրիվ վճարած բաժնեմասին համապատասխան ձայների քանակ: | Каждый участник общества на общем собрании имеет количество голосов, соответствующее его полностью оплаченной доле в уставном капитале общества. | Each participant of the company has a number of votes at the general meeting corresponding to their fully paid-up share in the company's authorized capital. |
| 13.8. | Ընկերության ընդհանուր ժողովում սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներն ընդունվում են բոլոր մասնակիցների մասնակցությամբ՝ միաձայն, կանոնադրության, դրա լրացումների և փոփոխությունների հաստատման, ինչպես նաև կանոնադրական կապիտալի փոփոխման մասին որոշումներն ընդունվում են ընկերության մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) | В общем собрании общества, в случаях, предусмотренных настоящим Уставом, а также при принятии решений о реорганизации и ликвидации общества, решения принимаются при участии всех участников общества единогласно. Решения об утверждении устава, его дополнений и изменений, а также о внесении изменений в уставной капитал принимаются большинством голосов не менее двух третей от общего числа | In the general meeting of the company, in cases provided for by this Charter, as well as when making decisions on the reorganization and liquidation of the company, decisions are made with the participation of all the company's participants unanimously. Decisions on the approval of the charter, its additions and amendments, as well as on changes to the charter capital, are made by a majority of votes of at least two-thirds of the total |

| | | | |
|---|---|---|---|
| | ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ, մնացած հարցերի վերաբերյալ՝ ձայների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: | голосов участников (их представителей), а по другим вопросам — простым большинством голосов от общего числа голосов участников. | number of votes of the participants (or their representatives), while decisions on other issues are made by a simple majority of votes of the total number of votes of the participants. |
| 13.9. | Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ: | Решения общего собрания принимаются открытым голосованием. | Decisions of the general meeting are made by open voting. |
| | Ընդհանուր ժողովի որոշմամբ օրակարգի որոշ հարցերի վերաբերյալ որոշումները կարող են ընդունվել քվեաթերթիկների միջոցով կատարվող քվեարկություններով: Այդ դեպքում ընդհանուր ժողովը սահմանում է մասնակիցներին քվեաթերթիկների տրամադրման կարգը, քվեաթերթիկների ձևն ու բովանդակությունը, քվեարկության արդյունքների հաշվառման և արձանագրության կազմման կարգը: | По решению общего собрания, для некоторых вопросов повестки дня решения могут быть приняты путем голосования с использованием бюллетеней. В этом случае общее собрание устанавливает порядок предоставления участникам бюллетеней, форму и содержание бюллетеней, порядок учета результатов голосования и составления протокола. | By the decision of the general meeting, decisions on certain issues of the agenda may be made through voting using ballots. In this case, the general meeting determines the procedure for providing ballots to participants, the form and content of the ballots, the procedure for counting the voting results, and the procedure for preparing the minutes. |
| 13.10. | Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ընդհանուր ժողովի արձանագրության վարումը: | Исполнительный орган общества организует ведение протокола общего собрания. | The executive body of the company organizes the making of the minutes of the general meeting. |
| 13.11. | Ընկերության ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ընկերության մասնակից չհանդիսացող ընկերության գործադիր մարմնի անդամները: | Члены исполнительного органа общества, не являющиеся участниками общества, могут присутствовать на общем собрании с правом совещательного голоса. | Members of the company's executive body who are not participants may attend the general meeting with the right of consultancy vote. |
| 13.12. | Ընկերության ընդհանուր ժողովի կողմից ընթացիկ գործերի ղեկավարման համար նշանակվում է գործադիր մարմինը՝ ընկերության տնօրենը: | Исполнительный орган — директор общества, назначается общим собранием общества. | The executive body — the company’s director, is appointed by the general meeting of the company. |
| | Ընկերության և տնօրենի միջև կնքվում է պայմանագիր, որը սահմանում է տնօրենի | Между обществом и директором заключается договор, который определяет права, обязанности, ответственность директора, его | A contract is concluded between the company and the director, which outlines the director’s rights, duties, responsibilities, relationships with |

իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, փոխհարաբերությունները մասնակիցների և աշխատավորական կոլեկտիվի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի ժամկետը, պայմանագրի դադարեցման և լուծման հիմքերը և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ են և չեն հակասում գործող օրենսդրությանը:

Ընկերության տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից:

взаимоотношения с участниками и трудовым коллективом, условия оплаты его труда, срок действия договора, основания для прекращения и расторжения договора и другие положения, которые необходимы и не противоречат действующему законодательству.

Директор общества решает все вопросы, за исключением тех, которые относятся к исключительной компетенции общего собрания.

participants and the working staff, conditions of employment, contract duration, grounds for termination and termination of the contract, and other provisions that are necessary and not in conflict with the applicable legislation.

The director of the company resolves all issues except those related to the exclusive competence of the general meeting.

13.13. Ընկերության տնօրենը՝

- տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում ընկերության անունից;
- կազմակերպում է ընդհանուր ժողովի որոշումների կատարումը;
- ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում;
- գործում է առանց լիազորագրերի;
- տալիս է լիազորագրեր՝ ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր;
- գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային;
- բանկերում բացում է ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ, այդ թվում՝ տարադրամային հաշիվներ;

- Директор общества:
- управляет имуществом общества, включая финансовые средства, заключает сделки от имени общества;
- организует выполнение решений общего собрания;
- представляет общество в Республике Армения и за рубежом;
- действует без доверенности;
- выдает доверенности на право представительства от имени общества, включая доверенности с правом передоверия;
- заключает договоры в порядке, установленном действующим законодательством, включая трудовые договоры;
- открывает расчетные и другие счета общества в банках, включая валютные счета;
- представляет на утверждение общего

The director of the company:

- manages the company’s property, including financial means, and makes transactions on behalf of the company;
- organizes the implementation of the decisions of the general meeting;
- represents the company in the Republic of Armenia and abroad;
- acts without a power of attorney;
- issues powers of attorney for the right to represent the company, including powers of attorney with the right of reauthorization;
- enters into agreements in accordance with the procedures established by the current legislation, including employment agreements;
- opens the company’s settlement and other accounts in banks, including foreign currency accounts;
- submits the company’s internal

| | | | |
|---|---|---|---|
| | • ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում ընկերության աշխատանքային կանոնակարգը, ընկերության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, վարչակազմակերպական կառուցվածքը;<br>• իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը;<br>• սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է ընկերության աշխատակիցներին;<br>• աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցառումներ:<br>Ընկերության տնօրենն իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումներ կայացնելու: | собрания трудовой регламент общества, уставы учреждений, филиалов и представительств общества, организационно-управленческую структуру;<br>• в пределах своей компетенции издает приказы, инструкции, дает обязательные для исполнения указания и контролирует их выполнение;<br>• принимает и увольняет работников общества в установленном порядке;<br>• применяет меры поощрения и дисциплинарной ответственности к работникам.<br>Директор общества не имеет права принимать обязательные решения для участников. | regulations, the charters of its institutions, branches, and representative offices, and the organizational structure for approval by the general meeting;<br>• within the scope of their authority, issues orders, instructions, gives mandatory instructions for execution, and oversees their implementation;<br>• hires and dismisses employees of the company in accordance with the established procedure;<br>• applies measures of encouragement and disciplinary responsibility towards the employees.<br>The company's director does not have the right to make binding decisions for the participants. |
| 13.14. | Ընկերության տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն ընդհանուր ժողովի համաձայնությամբ: | Директор общества может занимать оплачиваемые должности в других организациях только с согласия общего собрания. | The director of the company can hold paid positions in other organizations only with the approval of the general meeting. |
| 13.15. | Ընկերության տնօրենն իր գործունեության մասին հաշվետու է ընդհանուր ժողովին: | Директор общества подотчетен общему собранию за свою деятельность. | The director of the company is accountable to the general meeting for their activities. |
| 13.16. | Ընկերության տնօրենն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր գործողությունների հետևանքով ընկերությանը պատճառած վնասի համար: | Директор общества несет ответственность за ущерб, причиненный обществу в результате его действий, в соответствии с установленным законом порядком. | The director of the company is liable for the damage caused to the company as a result of their actions, in accordance with the procedures established by the law.<br>The director is exempt from liability for |

| | | | |
|---|---|---|---|
| | Տնօրենը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում է ընկերության և տնօրենի միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում: | Директор освобождается от ответственности за причиненный ущерб в случаях, предусмотренных договором, заключенным между обществом и директором. | the damage caused in cases provided for in the contract concluded between the company and the director. |
| 13.17. | Անհրաժեշտության դեպքում ընկերությունը կարող է ձևավորել խորհուրդ: Այդ դեպքում ընկերությունը պարտավոր է փոփոխություններ մտցնել սույն Կանոնադրության մեջ՝ սահմանելով խորհրդի ընտրության կարգը, իրավասությունները և պատասխանատվությունը: | При необходимости общество может создать совет. В этом случае общество обязано внести изменения в настоящий Устав, установив порядок избрания совета, его полномочия и ответственность. | If necessary, the company may establish a board. In this case, the company is required to amend this Charter, specifying the procedure for the election of the board, its powers, and responsibilities. |
| **14.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | **КОНТРОЛЬ, УЧЕТ И ОТЧЕТНОСТЬ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ОБЩЕСТВА** | **CONTROL, RECORDING, AND REPORTING OF THE COMPANY'S FINANCIAL AND ECONOMIC ACTIVITIES** |
| 14.1. | Ընկերությունը պարտավոր է ունենալ համապատասխան ներքին հսկողության համակարգ, որը կներառի ընկերության կառավարման և գործունեության բոլոր մակարդակները: Այդ նպատակի իրագործման համար Ընկերությունը պարտավոր է ունենալ ներքին աուդիտի անկախ ստորաբաժանում: Ներքին աուդիտի ղեկավար/անդամ/ չի կարող լինել ընկերության կառավարման մարմնի անդամը, այլ ղեկավարը և աշխատակիցը, ընկերության, դրա ղեկավարների կամ այլ աշխատակիցների հետ փոխկապակցված անձը, ինչպես նաև այն անձը, որը չի բավարարում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով | Общество обязано иметь соответствующую систему внутреннего контроля, охватывающую все уровни управления и деятельности общества. В целях реализации данной задачи общество должна иметь независимое подразделение внутреннего аудита. Руководитель/член внутреннего аудита не может быть членом органа управления общества, ее руководителем или другим сотрудником, а также аффилированным лицом общества, ее руководителей или других сотрудников, а также лицом, не соответствующим требованиям, установленным законом РА «О Рынке | The company is required to have an appropriate internal control system that covers all levels of the company's management and activity. To achieve this objective, the company must have an independent internal audit unit. The head/member of the internal audit unit cannot be a member of the company's management body, an executive or another employee of the company, an affiliated party to the company, its executives, or other employees, nor a person who does not meet the requirements set for the company's executives under the RA law "On the |

| | Armenian | Russian | English |
|---|---|---|---|
| | ընկերության ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները: | ценных бумаг» в отношении руководителей общества. | Securities Market”. |
| 14.2. | Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը/անդամը/ անկախ է իր իրավասություններն իրականացնելիս և հաշվետու է ընկերության ընդհանուր ժողովին: | Руководитель/член внутреннего аудита общества независим при осуществлении своих полномочий и подотчетен общему собранию общества. | The head/member/ of the company's internal audit is independent in exercising their powers and is accountable to the company's general meeting. |
| 14.3. | Ներքին աուդիտի ղեկավարը/անդամը.<br>1) հսկողություն է իրականացնում ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ,<br>2) ստուգում է ընկերության գործունեության համապատասխանությունն օրենքներին, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, կարգավորվող շուկայի կանոններով, ընկերության գործունեության կանոններով, սույն Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին<br>3) տալիս է եզրակացություններ և ներկայացնում առաջարկություններ ընդհանուր ժողովի կողմից ներկայացրած և այլ հարցերի վերաբերյալ: | Руководитель/член внутреннего аудита:<br>1) Осуществляет контроль за текущей деятельностью и рисками общества;<br>2) Проверяет соответствие деятельности общества законам, нормативным правовым актам, принятым на их основе, правилам регулируемого рынка, правилам деятельности общества, настоящему уставу и другим требованиям правовых актов,<br>3) Даёт заключения и представляет предложения по вопросам, представленным общим собранием, а также по другим вопросам. | The head/member of the internal audit:<br>1) Supervises the company's ongoing activities and risks,<br>2) Verifies the company's compliance with laws, regulatory legal acts adopted based on them, regulated market rules, company operational rules, this Charter, and other legal acts;<br>3) Provides conclusions and submits recommendations on issues presented by the general meeting and other matters. |
| 14.4. | Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով ընկերությունն ընդհանուր ժողովի որոշմամբ պետք է ներգրավի աուդիտ իրականացնող անձի, կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր, որում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելու պարտավորության ամրագրումից, պետք է նախատեսվեն նաև «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 84 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պահանջները: | В целях проверки финансово-экономической деятельности общества, общество на основании решения общего собрания должна привлечь аудитора, заключив с ним соответствующий договор, который должен предусматривать не только обязанность по подготовке аудиторского заключения, но и требования, установленные пунктами 3 и 4 статьи 84 закона РА «О рынке ценных бумаг». | For the purpose of verifying the company’s financial and economic activities, the company must engage an audit-performing entity based on a decision of the general meeting by concluding a relevant contract, which must not only establish the obligation to prepare an audit opinion but also include the requirements stipulated in clauses 3 and 4 of Article 84 of the RA law “On the Securities Market”. |

| | | | |
|---|---|---|---|
| | Աուդիտ իրականացնող անձն ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է ընկերության ընդհանուր ժողովին:<br><br>Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ աուդիտ իրականացնող անձի եզրակացությունը պարտադիր է: | Аудитор представляет свое заключение по проверке годовых отчетов и баланса общества общему собранию.<br><br>Аудиторское заключение является обязательным при утверждении годового баланса общества. | The audit-performing individual submits its opinion regarding the verification of the company’s annual reports and balance sheet to the general meeting.<br><br>The audit opinion is mandatory when approving the company's annual balance sheet. |
| 14.5. | Ընկերությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:<br><br>Ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվետվության հավաստիությունը պետք է հաստատվի ընկերության ներքին աուդիտորի եզրակացությամբ: | Общество ведет бухгалтерский учет и предоставляет финансовую и статистическую отчетность в порядке, установленном законом и другими правовыми актами.<br><br>Достоверность годового отчета, годового бухгалтерского баланса и отчета о прибылях и убытках, представляемых на утверждение общего собрания, должна быть подтверждена заключением внутреннего аудитора общества. | The company maintains accounting records and submits financial and statistical reports in accordance with the procedures established by the law and other legal acts.<br><br>The accuracy of the annual report, annual balance sheet, and profit and loss statement submitted for approval by the general meeting must be confirmed by the opinion of the company’s internal auditor. |
| 14.6. | Ընկերության շահերը վտանգվելու կամ պաշտոնատար անձանց թույլ տրված չարաշահումներ հայտնաբերելու դեպքում աուդիտ իրականացնող անձն իրավունք ունի պահանջելու արտահերթ ընդհանուր ժողովի անցկացում:<br><br>Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության վերստուգումը կարող է կատարվել նաև նրա մասնակիցներից յուրաքանչյուրի պահանջով: | В случае угрозы интересам общества или выявления злоупотреблений со стороны должностных лиц аудитор имеет право требовать созыва внеочередного общего собрания.<br><br>Годовая финансовая отчетность общества также может быть пересмотрена по требованию любого из её участников. | If the company's interests are at risk or if abuses committed by officials are detected, the auditor has the right to request the convening of an extraordinary general meeting.<br><br>The company's annual financial report may also be subject to review upon the request of any of its participants. |

| | Armenian | Russian | English |
|---|---|---|---|
| **15.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ** | **ОБОСОБЛЕННЫЕ ПОДРАЗДЕЛЕНИЯ ОБЩЕСТВА** | **SUBSIDIARIES OF THE COMPANY** |
| 15.1. | Իր գտնվելու վայրից դուրս գործունեություն ծավալելու և իր շահերը ներկայացնելու համար ընկերությունը կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ և մասնաճյուղեր: | Для осуществления деятельности за пределами своего местонахождения и представления своих интересов общество может создавать обособленные подразделения – представительства и филиалы. | The company can establish subsidiaries, such as representative offices and branches, to carry out activities outside its location and represent its interests. |
| 15.2. | Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: | Общество не имеет филиалов и представительств как на территории Республики Армения, так и за ее пределами. | The company does not have branches or representative offices within the Republic of Armenia or outside its borders. |
| **16.** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ** | **РЕОРГАНИЗАЦИЯ И ЛИКВИДАЦИЯ ОБЩЕСТВА** | **REORGANIZATION AND LIQUIDATION OF THE COMPANY** |
| 16.1. | Ընկերության վերակազմակերպումը կարող է կատարվել բացառապես մեկ այլ ներդրումային ընկերության հետ միացման կամ վերակազմավորման միջոցով: | Реорганизация общества может быть осуществлена исключительно путем слияния или реорганизации с другой инвестиционной компанией. | The reorganization of the company can only be carried out through the merger or reorganization with another investment company. |
| 16.2. | Ընկերության վերակազմավորման դեպքում նորաստեղծ իրավաբանական անձին են փոխանցվում վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերության իրավունքները և պարտականությունները, որոնք սահմանվում են փոխանցման ակտին համապատասխան: | В случае реорганизации общества права и обязанности реорганизованного общества передаются новообразованному юридическому лицу, как это указано в акте передачи. | In the case of the reorganization of the company, the rights and obligations of the reorganized company are transferred to the newly created legal entity, as specified in the transfer act. |
| | Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով: | Реорганизация общества осуществляется в соответствии с порядком, установленным Гражданским кодексом РА, законом РА «О рынке ценных бумаг» и другими применимыми законами. | The reorganization of the company is carried out in accordance with the procedure established by the RA Civil Code, the RA law "On the Securities Market", and other applicable laws. |

16.3. Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Ընկերությունը լուծարվում է՝

- ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ (ինքնալուծարում);
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզիան ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում;
- օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Ընկերությունը կարող է ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարվել միայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալուց հետո:

При ликвидации общества её деятельность прекращается без передачи прав и обязанностей другим лицам по правилам правопреемства.

Общество ликвидируется:

- по решению общего собрания общества (самоликвидация);
- в случае полного аннулирования лицензии Центральным банком РА;
- по другим основаниям, предусмотренным законом.

Общество может быть ликвидировано по решению общего собрания только после получения предварительного согласия Центрального банка РА в соответствии с процедурой, установленной законом РА «О рынке ценных бумаг».

With the dissolution of the company, its activity ceases without the transfer of rights and obligations to other persons in accordance with the rules of succession.

The company is dissolved:

- by the decision of the company's general meeting (self-liquidation);
- in the case of the complete revocation of the license by the Central Bank of Armenia;
- on other grounds specified by the law.

The company can only be dissolved by the decision of the general meeting after obtaining prior approval from the Central Bank of Armenia in accordance with the procedure established by the RA law "On Securities Market".

16.4. Ընկերության լուծարումն իրականացվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում:

Ликвидация общества осуществляется в соответствии с порядком и сроками, установленными Гражданским кодексом РА, законом РА «О рынке ценных бумаг» и другими законами.

The dissolution of the company is carried out in accordance with the procedure and deadlines established by the RA Civil Code, the RA law "On Securities Market", and other relevant laws.

16.5. Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, այդ մասին ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցումների մատյանում ընկերությանը գրանցումից հանելու մասին գրառում կատարելու պահից:

Общество считается ликвидированным, а его деятельность прекращенной с момента внесения Центральным банком РА записи в реестр о снятии общества с учета.

The company is considered dissolved, and its activities are considered terminated, from the moment the Central Bank of Armenia makes an entry in the registry to remove the company from the records.

## 17. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ / ИНЫЕ ПОЛОЖЕНИЯ / OTHER PROVISIONS

17.1. Անհաղթահարելի ուժի (փորս-մաժոր) հետևանքով նյութական կորուստներ ունենալու դեպքում հրավիրվում է ընկերության

В случае материальных потерь вследствие непреодолимой силы (форс-мажора) созывается внеочередное общее собрание общества для

In the event of material losses due to force majeure, an extraordinary general meeting of the company is convened to discuss the situation and make relevant

| | | | |
|---|---|---|---|
| | արտահերթ ընդհանուր ժողով իրադրությունը քննարկելու և յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու համար: | обсуждения ситуации и принятия соответствующих решений по каждому конкретному случаю. | decisions regarding each specific case. |
| 17.2. | Սույն կանոնադրությամբ չպարզաբանված հարցերը լուծվում են ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, ՀՀ միջազգային պայմանագրերին և գործող այլ իրավական ակտերին համապատասխան: | Вопросы, не урегулированные настоящим уставом, разрешаются в соответствии с Гражданским кодексом РА, законом РА «Об обществах с ограниченной ответственностью», законом РА «О рынке ценных бумаг», международными договорами РА и другими действующими правовыми актами. | Any issues not clarified by this charter are resolved in accordance with the RA Civil Code, the RA law "On Limited Liability Companies", the RA law "On the Securities Market", international agreements of RA, and other applicable legal acts. |

**«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ մասնակիցների ցուցակ**

**Список участников ОБЩЕСТВА С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ АКТИНА КАПИТАЛ**

**List of Participants of the LIMITED LIABILITY COMPANY AKTINA CAPITAL**

| Մասնակցի քաղաքացիությունը, անունը, ազգանունը (պետությունը որտեղ հիմնադրվել է, անվանումը) անձնագրի (գրանցման) տվյալները հասցեն (գտնվելու վայրը) / Гражданство участника, имя, фамилия (страна, в которой была учреждена, название), данные паспорта (регистрации), адрес (местонахождение) / Participant's citizenship, first name, last name (the country where it was established, the name), passport (registration) details, address (location) | Բաժնեմասերիք անակը / количество долей / number of Shares | Բաժնեմասի չափը (%) / Размер доли (%) / Participation Share (%)<br><br>*<u>(նշված բաժնեմասի չափը կլորացված է ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ / указанный размер доли округлен до четырех знаков после запятой / the specified participation share has been rounded to four decimal places)</u>* |
|---|---|---|
| **Տիգրան Ճշորսի Դավթյան** (ՀՀ քաղաքացի, ծննդյան ամսաթիվ՝ 22/03/1970թ., անձնագիր՝ AV0396518, տրված՝ 25/08/2022թ., 011-ից, վավերական է մինչև՝ 25/08/2032թ., ՀԾՀ՝ 3203700131, հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկինի փող. շենք 43, բն. 16)<br><br>**Тигран Давтян Щорсович** (гражданин РА, дата рождения: 22/03/1970г., паспорт: AV0396518, выданный: 25/08/2022г., от 011, действителен до 25/08/2032г., НЗОУ: 3203700131, адрес регистрации: РА, г. Ереван, ул. | 1750 | 90,2062 |

| | | |
|---|---|---|
| Пушкина, здание 43, кв. 16)<br><br>**Tigran Davtyan s/o Shchors** (RA citizen, date of birth: 22/03/1970, passport: AV0396518, issued on 25/08/2022, by 011, valid until 25/08/2032, SSN: 3203700131, registered at RA, Yerevan, Pushkin str., building 43, apt. 16) | | |
| **Ալեքսանդր Վիկտորի Պեյսախով** (Իսրայելի քաղաքացի, անձնագիր՝ 39363357, տրված՝ 17.11.2022 թվականին, Երուսաղեմի կողմից, վավերական է մինչև՝ 16.11.2027թ., հաշվառման հասցե՝ ՌԴ, ք. Մոսկվա, Պրեչիստենսկի նրբ., տուն 14, շենք 1, բն. 8)<br><br>**Александр Викторович Пейсахов** (гражданин Израиля, паспорт: 39363357, выдан 17.11.2022 в Иерусалиме, действителен до 16.11.2027, адрес регистрации: РФ, г. Москва, Пречистенский пер., д. 14, стр. 1, кв. 8)<br><br>**Aleksandr Peisakhov s/o Viktor** (citizen of Israel, passport: 39363357, issued on 17.11.2022 in Jerusalem, valid until 16.11.2027, registered address: Russian Federation, Moscow, Prechistensky lane, b. 14, str. 1, ap. 8) | 190 | 9,7938 |